ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

____ _____ 2020 թիվ ____-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14 -Ի N 767 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 մայիսի 14–ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը գույք փոխանցելու և գույքի նվիրատվության մասին» N767-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Հայաստանի Հանրապետությանը՝ «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով հանձնված՝ 36677288 դրամ մաքսային արժեքով արհեստական խոտածածկը՝ պոլիպրոպիլենից, 5686101 դրամ մաքսային արժեքով արհեստական խոտածածկի ենթաշերտը՝ սպունգանման ծածկույթից, 505783 դրամ մաքսային արժեքով արհեստական խոտածածկի պլ. ծածկույթը՝ պոլիեթերային նյութերից, 955049 դրամ մաքսային արժեքով ունիվերսալ սոսինձը (այսուհետ՝ Գույք), փոխանցել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:».

2) որոշման մեջ 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերում «5 օրվա» բառերը փոխարինել «10 օրվա» բառերով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. մայիսի 14-ի «Հայաստանի Հանրապետությանկրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանըգույք փոխանցելու և գույքի նվիրատվության մասին» N 767-Ա որոշման /այսուհետ՝ որոշում/2-րդ կետի հանձնարարականի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ս.թ. մայիսի 21-ի հ. 01/12-1/12027-20 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե /այսուհետ՝ կոմիտե/նույն որոշման 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետությանը՝ «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով հանձնված գույքը՝ սահմանված կարգով փոխանցել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը/այսուհետ նախարարություն/:

Սակայն կոմիտեն ս.թ. մայիսի26-ի հ. 01/18-4/33101-2020գրությամբ հայտնել է, որ որոշման 1–ին կետում տեղի է ունեցել վրիպակներ, մաքսային արժեքների փոխարեն արտացոլվել են հանձնման-ընդունման ակտում նշված գույքի Եվրոյով ներկայացված արժեքների դրամային արտահայտությունը՝ օրվա փոխարժեքին համապատասխան,ինչը ներկայումս խոչընդոտում է կոմիտեի կողմից որոշման 1–ին կետում նշված գույքը նախարարությանը փոխանցելու գործընթացին:

Սույն որոշման ընդմամբ կկարգավորվի Հայաստանի Հանրապետությանը՝ «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով հանձնված գույքը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանըփոխանցելուն գործընթացը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14 -Ի N767-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«ՀայաստանիՀանրապետության կառավարության 2020 թ. մայիսի 14 -ի N767 -Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14 -Ի N767-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N/N	**Առարկության, առաջարկությանհեղինակը, Գրությանստացմանամսաթիվը, գրությանհամարը**	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություն**
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն 2020-06-09 N01/2-1/8500-2020	Առարկություններ և առաջարկություններ չկան:		
3.	ՀՀ պետական եկամուտների կոմիտե 2020-06-08 01/18-4/36365-2020	Առարկություններ և առաջարկություններ չկան:		